



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԿԵՏԷ
Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ Ա. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, Յունուար 4-ին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Հոլիվուտի Ա. Կարապետ Մայր եկեղեցւոյ Ա. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ իր պատգամը:

Ա. Պատարագի աւարտին, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, հոգեհանգստեան արարողութիւն պիտի կատարուի Հ.Յ.Դ. Բիւրոյի բազմամեայ ներկայացուցիչ եւ վաստակաշատ ղեկավար Հրայր Մարուխեանի մահուան 10-րդ տարելիցին առիթով:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
ST. GARABED CHURCH

On Sunday, January 4th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Garabed Church in Hollywood and will deliver the sermon.

At the conclusion of Divine Liturgy the Prelate will preside over a special requiem service on the 10th anniversary of the passing of Hrayr Maroukhan, long-time ARF leader and Bureau member.

ՃՐԱԳԱԼՈՅՑԻ Ա. ՊԱՏԱՐԱԳ

Երկուշաբթի, Յունուար 5-ը Ա. Ծննդեան ճրագալոյցի օրն է:

Այս առիթով Ա. Պատարագ պիտի մատուցուի մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ եւ Ա. Հաղորդութիւն պիտի տրուի հաւատացեալ ժողովուրդին:

Առաջնորդ Սրբազանը Ա. Պատարագ պիտի մատուցէ Հոլիվուտի Ա. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ եւ պիտի փոխանցէ օրուան պատգամը:

Գերայ. Ս. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան Ա. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Սոնթեպելլոյի Ա. Խաչ Մայր Տաճարին մէջ:

Իսկ Յոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկիւմեան Ս. Պատարագ պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

CHRISTMAS EVE DIVINE LITURGY

On Monday, January 5th, Christmas Eve Divine Liturgy will be celebrated in all our churches followed by the offering of Holy Communion.

The Prelate will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Garabed Church in Hollywood.

Very Rev. Fr. Muron Aznikian will celebrate the Liturgy at Holy Cross Cathedral in Montebello and Very Rev. Fr. Barthev Gulumian at St. Sarkis Church in Pasadena.

Ս. ԾՆՆՂԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Երեքշաբթի, Յունուար 6-ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ հանդիսաւոր Սուրբ Պատարագ պիտի մատուցուի, որուն աւարտին պիտի կատարուի աւանդական ջրօրհնէք:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ, իր պատգամը պիտի փոխանցէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ քարոզէ Էսսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Յոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկիւմեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ:

Քրեսենթա Յովիտի Յայց. Առաք. եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագի արարողութիւնները կը շարունակուին ամէն Կիրակի, կ.ե. ժամը 1-ին: Երեքշաբթի, Յունուար 6-ին, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, դարձեալ Ս. Պատարագ պիտի մատուցուի բացառաբար կ.ա. ժամը 10:30-ին: Պիտի պատարագէ եւ քարոզէ շրջանի հոգեւոր մատակարար՝ Արժ. Տ. Արտակ Քինյ. Տեմիրճեան:

ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՈՐԹ ՀՈՒԿՎՈՒՄԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Նորթ Հոլիվուտի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ անդրանիկ Ս. Պատարագը պիտի մատուցուի Ս. Ծնունդի տօնին օրը: Ս. Պատարագը պիտի մատուցէ, պիտի քարոզէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ ծիսական նոր շրջանի հոգեւոր մատակարար՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Արարողութիւնները տեղի պիտի ունենան St. Paul Assyrian-Chaldean Catholic եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ. հասցէն է 13050 Vanowen Street, North Hollywood:

CHRISTMAS DIVINE LITURGY SCHEDULE

On Tuesday, January 6th, the Birth and Theophany of our Lord Jesus Christ will be celebrated with Divine Liturgy and the blessing of water.

The Prelate will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and preside over the blessing of water at St. Mary's Church in Glendale.

H.E. Archbishop Yeprem Tabakian will conduct services at Holy Martyrs Church in Encino.

Very Rev. Fr. Barthev Gulumian will conduct services at Forty Martyrs Church in Orange County.

Though Divine Liturgy at the Crescenta Valley parish is usually celebrated at 1:00 p.m., on Tuesday services will begin at 10:30 a.m. and will be celebrated by Rev. Fr. Ardag Demirjian.

As previously reported, the first Divine Liturgy at the newly established North Hollywood Parish will be celebrated on Christmas day starting at 10:30 a.m., at St. Paul Assyrian Chaldean Catholic Church at 13050 Vanowen St. in North Hollywood.

ՀՈԳԵՅԱԼԳԻՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՄԱՅՆ ՆԱԶԵՑԵԼՈՑ

Չորեքշաբթի, Յունուար 7-ին, Ս. Ծննդեան Մեռելոցի օրուան առիթով, եւ համաձայն մեր եկեղեցոյ աւանդութեանց, մեր հանգուցեալ հարազատներուն յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Հոլիվուտ Հիլզի Forest Lawn գերեզմանատան Hall of Liberty սրահին եւ Կլէստէյլի Forest Lawn գերեզմանատան Church of the Recessional եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00-ին, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւոր հայրերուն:

MEMORIAL SERVICE AT FOREST LAWN

On the morning of Wednesday, January 7th, the Prelate will preside over the traditional memorial service at Forest Lawn.

Services will take place at the Hollywood Hills Forest Lawn Hall of Liberty and the Glendale Forest Lawn Church of the Recessional beginning at 10:00 a.m.

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԷՋ

Մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, եւ տնօրինութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր,

Ուրբաթ, 2 Յունուարի առաւօտուն, յատուկ ժամերգութիւն եւ Ս. Պատարագ տեղի ունեցաւ «Արարատ» Տան Միշըն Զիլզի կեդրոնին մէջ:

Առաւօտեան ժամը 10-ին, հաստատութեան հիւանդանոցի բաժնին մէջ տեղի ունեցաւ ժամերգութիւն, իսկ ժամը 10:30ին, Ս. Պատարագ մատուցուեցաւ հաստատութեան մատրան մէջ:

Պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան: Արարողութեան երգեցողութիւնը կատարեց Ս. Նահատակաց եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ՝ խմբավար Կոմիտաս Զէշիշեանի:

Յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ ջրօրհնէք. պատասպարեալները ստացան Ս. Զաղորդութիւն:

CHRISTMAS DIVINE LITURGY AT ARARAT HOME

On the morning of Friday, January 2nd, morning services and Christmas Divine Liturgy was celebrated at Ararat Home in Mission Hills.

Morning services began at 10:00 a.m. and took place in the nursing facility, followed by Divine Liturgy at 10:30 a.m. in the Chapel.

Very Rev. Fr. Barthev Gulumian celebrated Divine Liturgy and delivered the sermon. Members of the Holy Martyrs Church choir, led by Mr. Gomidas Keshishian, participated in the services.

At the conclusion of the services Holy Communion was offered to the residents.
